# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ և ՍՈՑԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2018 Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## *ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ*

Մարզում գործում են 8 բժշկական հաստատություններ,որոնցից 3-ը մատուցում են ամբուլատոր և հիվանդանոցային ծառայություններ, իսկ մնացած 5-ը առողջության առաջնային պահպանման կենտրոններ են և մատուցում են միայն ամբուլատոր ծառայություններ: Բուժհաստատություններում աշխատում են 413 մարդ, որից 103 բժիշկ, 205 բուժքույր:

2018թ. գլոբալ բյուջեով մարզի առողջապահական հաստատությունների ֆինանսավորման համար հատկացվել է **662 376.0 հազ. դրամ** գումար:
2018թվականի ընթացքում կատարվել են 60393.4 հազ. դրամի վճարովի բժշկական ծառայություններ:

Մարզի հիվանդանոցային բժշկական հիմնարկները համալրվել են շտապ օգնության 5՝ 1 ռեանիմոբիլ և 4 գծային մեքենաներով, բժշկական սարքավորումներով և գույքով:

Պետական պատվերով վերապատրաստում են անցել 9 բուժ աշխատողներ: Պարբերաբար ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ կազմակերրպվել են սեմինարներ, դասընթացներ, որոնց համար տրվել են ՇՄՋ միավորներ:

Ապահովվել է հատուկ հիվանդություններով տառապող անձանց անվճար և արտոնյալ պայմաններով դեղորայքի տրամադրումը, ինչպես նաև սոցիալական խմբերում ընդգրկված անձանց անվճար բուժ.ծառայություններ են մատուցվել մարզի բնակչությանը:

2018 թ.–ին մարզի բուժհաստատություններում հաշվառվել է 363 ծնունդ, 2017 թ. համեմատ նվազել է 10-ով:

Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում առողջարանային վերականգնողական բուժման են ուղեգրվել հաշմանդամություն ունեցող 19 մեծահասակ և 4 երեխա:

**Սոցիալական ապահովության բնագավառ**

2018թվականին մարզի սոցիալական աջակցության տարածքային գործակալություններում փաստագրվել են 2233 ընտանիքներ: Նպաստառու է դարձել 1934 ընտանիք, որից ընտանեկան նպաստ՝ 1468 և սոցիալական նպաստ՝ 466 ընտանիք: Վճարվել է 680.8 մլն դրամ նպաստ: Վայքի, Եղեգնաձորի և Ջերմուկի սոցիալական համագործակցության աշխատանքները համակարգող խորհուրդների որոշումներով նպաստի համակարգից դուրս մնացած սոցիալապես անապահով 106 ընտանիքների նշանակվել է հրատապ եռամսյակային դրամական օգնություն՝ վճարվել է 22.4մլն դրամ:

Շարունակվում է ավանդների փոխհատուցման աշխատանքները՝ ավանդի փոխհատուցում է տրվել 106 քաղաքացու, վճարվել է 22.4 մլն դրամ:

Ձեռնարկվել են միջոցառումներ նպաստի համակարգին պետական բյուջեից հատկացված միջոցների հասցեականության ապահովման և նպատակային օգտագործման ուղղությամբ: Պարբերաբար իրականացվել են հարակից բազաներից ստացվող տեղեկատվությունների և տեղական տեղեկատվական բազաների համադրման, մասնագետների տնային այցելությունների միջոցով ընտանիքների սոցիալական վիճակի ուսումնասիրությունների գործառույթներ:

Մարզում կենսաթոշակառուների թիվը 10061 է, որոնց վճարվել է շուրջ 4.7 մլրդ. դրամ կենսաթոշակ:

Մարզի զբաղվածության տարածքային կենտրոններում գրանցվել է աշխատանք փնտրող 1282 մարդ , որից 950-ը ստացել է գործազուրկի կարգավիճակ: Աշխատանքի է տեղավորվել 313 մարդ, որից 83-ը զբաղվածության ծրագրերի միջոցով:

**Առողջապահության և սցիալական ապահվության**

**վարչության պետ՝ Վ.Ասլանյան**

**10.01.2019թ.**